

619

11-36

ՅԶՈՒԳԱՄ Է 1961 թ.

ՊԵՐՏԵԴԻՐ

ԶՈՌ-ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ

ԿԱՆՈՆՆԵՐ

(ՍՊԻՏԱԿԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ)

1938 թ.

A  $\frac{i}{2524}$



«Անասնապահության գործը պետք է իրենց ձեռք տանեն վողջ կուսակցությունը, մեր բոլոր աշխատավորները՝ կուսակցականները և անկուսակցականները, նկատի ունենալով, վոր անասնապահության պրոբլեմն այժմ նույնպիսի առաջնահերթ պրոբլեմ է, վորպիսին եր յերեկ՝ արդեն հաջողությամբ լուծված հացահատիկի պրոբլեմը»:



ՍՏԱԼԻՆ

# ՍՊԻՏԱԿԻ ԵՐՋԱՆԻ 1938 Թ. ՊԱՐՏԱԴԻՐ ԶՈՈ-ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հաստատված ՀԽՍՀ Կենտրոնական  
Պետական Սպիտակի շրջանի Կազմակերպու-  
թյան 3/IV 1938 թ. նախագահության  
նիստում:

Սոցիալիստական անասնաբուծության  
հետագա զարգացման, նրա քանակական  
և լրացական ցուցանիշների ապահովման,  
ռացիոնալ կերակրման, խնամքի, կաթի  
վերամշակման և բարձրորակ կաթնա-  
մթերքներ ստանալու, հիվանդություննե-  
րը ժամանակին կանխելու և նրանց դեմ  
պայքարելու նպատակով, բոլոր կոլտնտե-  
սային ապրանքային ֆերմաներում անշե-  
ղորհ կիրառել հետևյալ զոո-անասնաբու-  
ժական կանոնները:

# 1. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԶՄՌԱՆ ՍԵՋՈՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. Նոր կառուցվելիք գոմերի տեղի ընտրությունը կատարվում և Հողբաժնի թույլտվությամբ՝ հատուկ հանձնաժողովի կողմից:

2. Գոմաշինարարությունը կատարել Հողժողկոմատի կողմից հաստատված նախագծերով: Գոմերի ներքին սարքավորումը կատարել ըստ նախագծի՝ շրջանային ավագ զոոտեխնիկի և ավագ անասնաբուժի ցուցմունքներով: Գոմաշինարարությունը վերջացնելուց հետո վերջինս պետք և ընդունվի հատուկ հանձնաժողովի կողմից, վորից հետո միայն կարելի չե նրան ոգտագործել:

3. Արգելել բնակելի և այլ շենքերի կառուցումն այն տերիտորիայի վրա, վորը հատկացված և գոմաշինարարության և նրանց սպասարկող այլ տնտեսական շենքերի համար:

4. Անասուններին տեղավորելու նպա-

տակով) այլ շենքերի հարմարեցումը թույլատրվում է միմիայն նախորոք այդ շենքի ախտահանում կատարելուց հետո:

5. Ծինը ընդունելու համար յուրաքանչյուր ֆերմայում ունենալ հատուկ բաժանմունք—ծնարան:

6. Ծնարանները մասսայական ծնի նախորյակին յենթարկել հիմնական մաքրման և ախտահանման, իսկ անասունների յուրաքանչյուր ծնից հետո նմանապես ծնի վայրը յենթարկել ախտահանման:

7. Արոտային շրջանում, նախքան մըսուրային պահպանման անցնելը, բոլոր շենքերը վերանորոգել, ախտահանել, տաքացնել, պատերի սվաղում, կտուրների ծածկում, պատուհանների ապակիների դրել և այլն:

8. Հիվանդ և կասկածելի անասուններին մեկուսացնելու և նրանց բուժելու համար ունենալ հատուկ մեկուսարաններ: Մեկուսարանները պետք է գտնվեն դոմերից, ճանապարհներից, ջրերից և բնակելի շենք

քերից լոչ պակաս քան 300 մեար հեռավորության վրա և կառուցվեն այնպիսի տեղ, լոր տարվա ընթացքում քամիներն ուղղությունը լինի գոմերից դեպի մեկուսարան:

9. Բոլոր անասնագոմերը պետք և կահավորվի մսուրներով, հորթերի վանդակներով, ողափոխության խողովակներով, կապերով և անհրաժեշտ անասնապահական գույքով: Այն ե՛ղույլերով, բահերով, յեղաններով, խողանակներով, քերիչներով, գոգնոցներով, նասիլկաներով, լապտերներով, լվացարաններով, սրբիչներով, ջերմաչափներով և այլն:

10. Գոմերում պետք և լինեն մեզատար խողովակներ, լորոնցով մեզը թափվի գոմերից դուրս պատրաստված հատուկ մեղամբարները:

11. Յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք և ունենա գոմադբահորեր, ուր պետք և կուտակվի և պահպանվի ամբողջ գոմադը:

12. Նախքան մսուրային շրջանին



անցնելը, բոլոր տեսակի անասուններին  
յենթարկել զոո-անասնաբուժական սառագ-  
ման, կիրառելով հետևյալ զոո-անասնա-  
բուժական միջոցառումները՝

ա) Թույլ և նիհար անասուններին ա-  
ռանձնացնել և ուժեղացնել նրանց կերա-  
կրումն ու խնամքը.

բ) Մաշկի հիվանդությունն ունեցող ա-  
նասուններին (եգզեմա, քոս, մկնատտոմ)  
առանձնացնել հատուկ շենքերում, կանո-  
նավորելով նրանց կերակրումն ու բուժու-  
մը.

գ) Բոլոր կոլտնտեսային անասնապա-  
հական ֆերմաներում անասուններին յեն-  
թարկել անասնաբուժական վերամշակման՝  
տուբերկուլյոզ և բրուցելյոզ (վարակիչ  
վիժում և խլախտ-սապ) հիվանդություննե-  
րի նկատմամբ: Հայտնաբերված հիվանդ  
անասուններին անմիջապես առանձնացնել,  
վորոնց նկատմամբ խստորեն կիրառել  
զոո-անասնաբուժական պարտադիր միջո-  
ցառումները:

Պարտադիր կարգով բոլոր կոլտնտե-



սություններում՝ գոմերից, բնակելի շենքերից, ճանապարհներից և հոսող ջրերից 300 մետր հեռավորության վրա ունենալ անասնադերեզմանոց—համաձայն անասնաբուժական պահանջների:

13. Անասուկները գոմերում դասավորելու ընթացքում կատարել հետևյալ խմբավորումները՝

ա) Խոշոր յեղջիրավոր անասուկների նկատմամբ՝

Արտադրողների խմբակ

Կովերի, յերինջների խմբակ

1—2 տարեկան եգ մատղաշների խմբակ

1—2 տարեկան վորձ մատղաշների խմբակ

Մինչև մեկ տարեկան մատղաշների

խմբակ:

Անպայման 6 ամսական հասակից առանձնացնել եգերը վորձերից:

բ) Մանր յեղջիրավոր անասուկների նկատմամբ խմբակներ՝ խոյերի (առանձնացնելով ցեղականը տեղականից),

մաքիների, ծածկված շիշակների և վորձ ու  
եգ մատղաշների.

գ) Խողերի նկատմամբ՝ վարազներին  
պահել առանձին վանդակներում, մայրե-  
րին առանձին վանդակներում, 4—9 ամ-  
սական եգ մատղաշներին և 4—9 ամսական  
վորձ մատղաշներին՝ առանձին վանդակ-  
ներում՝ յուրաքանչյուրում 4—6 գլուխ և  
2—4 ամսական եգ ու վորձ խոճկորներին  
առանձին վանդակներում՝ յուրաքանչյու-  
րում 8—10 գլուխ.

դ) Ջիերի նկատմամբ՝ բանող ձիերի,  
հովատակների, դամբիկների և մատղաշ-  
ների խմբերի:

14. Զոո-անասնաբուժական վերանայ-  
ման կապակցությամբ կատարել բանտի-  
րովկա—համարակալում և խոտանում:

Բոլոր տեսակի տոհմային և մետիս  
(խառնուրդ) անասունների ամորձատումը  
կատարել հատուկ զոո-անասնաբուժական  
հանձնաժողովի միջոցով, խստիվ արգելե-  
լով ցեղական նշանակություն ունեցող ա-  
նասունների ամորձատումը:

15. Բոլոր ցեղական և մետիս անասուններին հատկացնել բարեկարգված գոմեր, նրանց սպասարկումը հանձնարարել փորձված և հմուտ անասնապահներին, ապահովելով նրանց կերակրումը լրիվ չափով և բարձրորակ կերերով:

16. Բոլոր անասնագոմերի մուտքի մոտ ունենալ անպայմանորեն հատուկ արկըղներ՝ լցված կրով կամ այլ ախտահանիչ նյութերով՝ վտուքերն ախտահանելու համար:

17. Բոլոր գյուղերում, արոտային շրջանում, արոտավայրերում անասնաբուժի ցուցմունքներով, հատուկ տեղերում կառուցել մորթման հրապարակներ: Խըստիվ կերպով արգելել անասունների մորթը գոմերում և այլ վայրերում:

Մսի ոգտագործումը կատարել միմիայն անասնաբուժի թույլտվությամբ:

18. Տնտեսության մեջ նոր ստացված անասունները յենթարկվում են կարանտինայի՝ վոչ պակաս 15 որից, իսկ ձիերը և խոզերը՝ 21 որից: Կարանտինայի համար հատկացվում և հատուկ շենք և հա-

տուէկ արոտամասեր: Կարանտինայում գը-  
տընված ժամանակամիջոցում անասուն-  
ները յենթարկվում են անասնաբուժական  
ստուգման, այն ե՛ն ձիերը յենթարկվում են  
մալլենիզացիայի, խոշոր յեղջերավոր ա-  
նասունները՝ տուբերկուլինիզացիայի, վոչ-  
խարհերը, խոզերը և խոշոր յեղջերավոր  
անասունները՝ բրուցելյոզայի դեմ:

19. Կարանտինայի ժամկետը վերջա-  
նալուց և անասնաբուժական ստուգումից  
հետո, հիվանդության բացակայության  
դեպքում անասուններին կարելի յե խառ-  
նել ընդհանուր նախրին: Կարանտինայի  
մեջ գտնվող անասունների սպասարկման  
համար պետք ե նշանակել հատուկ սպա-  
սարկող անձնակազմ, առանձին ջրեղատեղ  
և ինվենտար:

20. Այն անձինք, վորոնք սպասարկում  
են կարանտինայի մեջ գտնվող անասուն-  
ներին, իրավունք չունեն մտնելու տնտե-  
սության մյուս գոմերը և անասնակերերի  
պահեստները:

21. Անասուններին գյուղի շրջակայքից

դուրս բերելու դեպքում (շուկա, տոնավա-  
ճառ, ցուցահանդես և այլն) կոլտնտեսու-  
թյան վարչությունը, խորհրդատեսության  
դիրեկտորը, կոլտնտեսականները կամ մե-  
նատնտեսները պարտավոր են անասնա-  
բուժից վերցնել վկայական՝ տվյալ տնտե-  
սության կամ վայրի վարակիչ հիվանդու-  
թյուններից ապահով լինելու մասին:

22. Կոլտնտեսության համայնացված  
հոտի հետ արգելել կողմնակի անասուննե-  
րի տրանսպորտի մուրափոխություն, այնպես ել  
արտափոխություն:

23. Խորհրդատեսության և կոլտնտեսու-  
թյան ֆերմաներում, ինչպես և կոլտնտե-  
սականների ու մենատնտեսների անասուն-  
ների մեջ միանման նշաններով հիվանդու-  
թյուն յերեվալը կամ մի քանի անասուն-  
ների հանկարծակի անկման դեպքում, հիշ-  
յալ տնտեսությունների ղեկավարները  
պարտավոր են անմիջապես կանչել ան-  
ասնաբուժին՝ հիվանդության բնույթը  
(դիագնոզը) վորոշելու և միջոցներ ձեռք  
առնելու համար:

34. Հիվանդ անասուններին անմիջապես առանձնացնել հոտից և ուղարկել մեկուսարան: Հիվանդ անասունի տեղն անպայման ախտահանել, աղբը և ցամքարն այրել, չայրված մնացորդները թաղել հողում:

25. Առանց լաբորատորիայի քննության՝ անասունների փոխանակում և գընում այլ կազմակերպություններից և տեղերից չկատարել:

26. Ստակած անասունների դիակներն անմիջապես տեղափոխել անասնագերեզմանոց: Վիժվածները, պտուղը, ընկերքը և հորթերի դիակները դրվում են առանձին տեղ, մինչև անասնաբուժի գալը և դիահերձում կատարելը:

27. Դիակների փոխադրման համար ունենալ հատուկ սայլակներ՝ թիթեղապատ արկղներով. սայլակներն ախտահանել յուրաքանչյուր ռգտագործումից հետո:

28. Այն վայրերում, վորտեղ կա վոչխարների քոս հիվանդությունը, գարնանը և աշնանը կատարել հակաքոսային կրկնա-



կի լողացում: Լողացման յենթարկել նաև հոտի շները:

29. Տնտեսությունն նոր մուտք գործող բոլոր շներին պահել կարանտինի տակ 15-օր և կատարել ճիճվաթափում: Վոչ-խարճերի գոմերում շներ պահելը չի թույլատրվում:

30. Խլախտով—սապով կասկածելի ձիերին հայտնաբերելիս անմիջապես ուղարկել խլախտային տնտեսություն և պահել մեկուսացված:

31. Բոլոր անասնապահական ֆերմաները պետք է ունենան անասնաբուժական դեղարկղներ (ապտեչկաներ)—դեղորայքի գործածման կանոններով:

## 2. ԿԱԴՐԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Ստուգել անասնապահության բնագավառում աշխատող բոլոր կադրերը և կատարել համապատասխան ամրացումներ՝ ստուգված, գործին նվիրված և փորձված աշխատողներով, վոչ պակաս 3 տարի ժամանակով:



1. Անասուններին ձմեռվա ընթացքում կերով ապահովելու նպատակով. ըստ կոլտնտեսությունների շրջանային գոտաբնակի կողմից կազմվում և կերի բալանա:

Կերի բալանաները պետք և հաստատվեն կոլտնտեսության վարչությունների և ընդհանուր ժողովների կողմից: Ըստ կերի բալանաի—բոլոր տեսակի կերերը համապատասխան ակտով հանձնվում են ֆերմայի վարիչին, վորը պատասխանատու յի այդ կերերի պահպանման և ռացիոնալ օգտագործման համար:

2. Անասուններին ջրելու համար յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք և ունենա սարքավորված ջրելատեղ:

3. Վորպես կանոն, բոլոր տեսակի հզի անասուններին ծնելուց 15 օր առաջ և ծնելուց 15 օր հետո ջրել գոմում՝ 10—12 ասաիճանից (ցելսուսով) վոչ պակաս ջերմություն ունեցող ջրով:

4. Բոլոր կոլտնտեսային ֆերմաներում կազմակերպել պայքար կորուստների դեմ

և ձեռնարկել հակահրդեհային բոլոր տե-  
սակի միջոցառումները՝ ապահովելով գույ-  
քի պահպանումը: Գոմերի մոտ ունենալ  
հատուկ ջրի ամբարներ:

5. Յեղնելով տեղի պայմաններից, յու-  
րաքանչյուր ֆերմայում գոռաբրսոնալի  
կողմից մսուրային շրջանի համար մշակ-  
վում է գոմի ներքին կարգապահության  
կանոններ՝ հաստատված ֆերմայի արտա-  
դրական խորհրդակցության կողմից:

Ներքին կարգապահության կանոնները  
մշակելիս հիմք ընդունել աշխատանքների  
հետևյալ հաջորդականությունը՝

ա) կուրս յեղջերավոր անասունների նը-  
կատմամբ առավոտը—Գոմադրը դուրս բերել  
գոմից, գուլ ջրով լվանալ կթվող կովերի  
կուրծքը և ապա չորացնել հետո միայն կը-  
թել. այնուհետև անցնել կերակրման,  
սկզբումը տրվում է խտացրած կերերը,  
ապա ջրվում, հետո հյութալի կերերը, իսկ  
վերջում՝ կոպիտ կերերը: Կերակրելուց հե-  
տո անցնել անասունների և գոմի մա-  
քրմանը:

1556  
A 2524

Հանգիստ մինչև կեսորը, խոտ, հանգիստ, ջրեւ, մաքրում, կիթ, կերակրում— նույն հերթականությամբ:

բ) Վոչխարների և այծերի նկատմամբ առավոտյան — Ջրեւ, կերակրել, ապա գոմը մաքրել, նույնը յերեկոյան: Այծերի գոմը ընտրել այնպիսի տեղ, վորը պաշտպանված լինի արեւմտյան և հյուսիսային քամիներից: Այծերին ձմեռը կերակրել գոմերում:

գ) Խոզերի նկատմամբ առավոտյան — Խոզանոցի և վանդակների մաքրումը, կերերի պատրաստումը՝ կերակրում, ջրում, հանգիստ, կեսորին և յերեկոյան նույնը ինչ վոր առավոտյան: Լավ յեղանակներին՝ կեսորին դռսանք:

դ) Զիւրի նկատմամբ առավոտյան — Ջրեւ, խտացրած կերով կերակրել, ապա խոտով, թիմարել, գոմի մաքրում, հանգիստ կամ աշխատանք:

հետորին տրվում և միմիայն խոտ, յերկրյան նուշնը ինչ վոր առավոտյան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Արգելել բանող ձիերի խնամքը և պահպանումն այն գոմում, վորտեղ տեղավորված են հղի դամբկները, ձիանոցները պետք և պահպանվեն մաքուր, գոմաղբը սահմանված ժամերին դուրս բերել գոմից, ստուգել ողանցքների նորմալ աշխատանքը և անասունների կանգնելատեղը փռել չոր ցամքար:

6. Բոլոր գոմերում ունենալ ջերմաչափեր և ժամացույցներ:

7. Գոմերում պահպանել նորմալ ջերմաստիճան (8—10 աստիճան), խողանոցներում և հորթանոցներում՝ 12—14 աստիճան, ծնարաններում՝ 15—18 աստիճան (ցելսուսով):

8. Առանց ֆերմայի վարիչի, զոոտեխնիկի և անասնաբուժի թույլատվության՝ արգելել կողմնակի մարդկանց մուտքը գոմերը:

9. Բոլոր տեսակի հղի անասուններին ծնելուց 15—20 օր առաջ տեղափոխել ծնարան: Ծնելուց հետո նույնպես 15 օր

պահել ծնարանում, ծնարանի տարողու-  
թյունը պետք է լինի 4—6 հատի, նայած  
կովերի քանակին մինչև 10 հատի: Ծնարա-  
նում կովերին ապահովելով լավորակ կե-  
րերով:

Խստիվ արգելել անասուններին սառեց-  
րած կերով կերակրելը և սառը ջրով ջրե-  
լը: Հղի անասունների խնամքն ու կե-  
րակրուժը հանձնարարել փորձված ու վըս-  
տահելի անասնապահների: Կովերին հղիու-  
թյան 7-րդ ամսից հետո արգելել սիլոսով  
կերակրելը:

10. Կտրականապես արգելվում է անա-  
սունների վարակիչ հիվանդություններով  
ապահով վայրերից և տնտեսություննե-  
րից կերեր ներմուծելը — առանց անասնա-  
բուժի թույլտվության:

11. Արգելվում է անասնակերը պահել  
մարդկային զուգարանների (արտաքնոցնե-  
րի), միզահորերի մոտ և անասնաշենքերում:

12. Արգելվում է անասնագոմերում,  
խոտի գեղերի մոտ և դարմանոցներում  
ծխախոտ ծխելը:

13. Արգելվում է անասուններին ջրել կեղտոտ և լճացած ջրերով, բոլոր ֆերմաների մոտ ունենալ զուգարաններ (արտաքնոցներ):

### 3. ՄԱՏՂԱՇՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄՆ ՈՒ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1. Ծինն ընդունում է փորձված և գործին տիրապետող, հմուտ անասնապահը կիրառելով պահանջվելիք զոո-գիգիենիական կանոնները:

2. Վիժումների դեպքում ցամաքաբլր բոլոր տեսակի արտաթորումներով պետք է անմիջապես այրել կամ հորել, իսկ այն վայրը, վորտեղ տեղի յե ունեցել վիժումը՝ անհրաժեշտ է անմիջապես ախտահանել թանձր կրակաթով կամ թարմ մաքած կրով:

3. Վիժած անասուններին անմիջապես պետք է փոխադրել ընդհանուր ծնարանից մեկուսարան:

4. Ծնարաններում սահմանել ցերեկվա և գիշերվա հերթապահություն:

5. Ծնից անմիջապես հետո պետք է հեռացվի և խորը թաղվի ծինը (ընկերքը):



խօստիվ արգելել ծնի կերակրումը շնե-  
րին, խողերին և թռչուններին:

6. Հղի անասունների նկատմամբ սահ-  
մանել հատուկ հսկողություն՝ թույլ չը-  
տալով նրանց անցուղարձը ցեխոտ և սա-  
ռած ճանապարհներով:

7. Հղի անասուններին գոմից դուրս և  
ներս բերելը պետք է կատարվի մաս-մաս,  
վորպեսզի դռան մոտ չստեղծվի կուտա-  
կում և հրում:

8. Ծնից մեկ ու կես, յերկու ամիս ա-  
ռաջ հղի կովերի կիթը պետք է աստիճա-  
նաբար դադարեցվի:

9. Նորածին հորթերը տեղափոխվում են  
անհատական վանդակները և մինչև 20 ո-  
րական հասակը—կերակրվում են դուռ ի-  
րենց մոր կաթով:

Տուբերկուլյոզ և բրուցելյոզ հիվան-  
դություններով տառապող կովերի ծինը  
ընդունվում է առանձին ծնարաններում:  
Այդպիսի կովերից ստացված հորթերը կե-  
րակրվում են ձեռնաքարշ առողջ կովի  
կաթով: Միայն նույն ժամանակամիջո-

ցում ծնած առողջ կով չլինելու դեպքում՝  
թույլատրվում է կերակրել հիվանդ կովերի  
հորթերին մոր կաթով՝ միմիայն առաջին  
10 որվա ընթացքում:

10. Նորածին մտրուկներին ծնվելու ա-  
ռաջին 3 որվա ընթացքում մոր հետ տե-  
ղավորում են առանձին բաժանմունքում—  
դեննիկում:

11. Նորածին գառներն առաջին 3 որը  
սահվում են խմբերով, կերակրող մայրե-  
րի հետ միասին:

12. Խոճկորները սահվում են առանձին  
արկղում և թողնվում են ծծելու յուրա-  
քանչյուր 2—3 ժամը մեկ անգամ:

13. Ձեռքով կերակրվող կաթի ջերմ-  
աստիճանը պետք է լինի 36—38 աստիճան:

14. Հորթերին խիժը (դալ) կաթով կե-  
րակրելը չսահմանափակել և տալ որակա-  
նի քանի անգամ՝ 2—3 ժամ ընդմիջում-  
ներով: Յեվ որակա- 4—5 անգամ՝ առաջին  
շաբաթում:

15. Բոլոր նորածին հորթերին մինչև

մեկ ամսական հասակը՝ ապահովել դնչկալ-  
ներով:

16. Հորթերին մեկ ամսական հասակից  
անարատ կաթով կերակրելու չափը հետըզ-  
հետե նվազեցնել, փոխարինելով քաշած  
կաթով և լրացուցիչ կերպով կերակրել խը-  
տացրած կերերով (ջարդած վարսակով կամ  
գարով):

17. Խտացրած կերերի հետ միասին  
պարաադիր կերպով տալ նաև վոսկրա-  
լույր, կավիճ և սովորական աղ—15—20  
գրամի չափով:

18. Խոճկորները 10 որական հասակից  
լրացուցիչ կերպով ստանում են հատիկա-  
յին կեր: Նույնը մտրուկները՝ 3 ամսական  
հասակից:

19. Մատղաշների կերակրման բոլոր  
տեսակի ամանները պետք է լինեն մա-  
քուր և կերակրելուց առաջ լվացած յեռա-  
ցրած ջրով ու չորացված:

20. Կաթնային կերակրման շրջանն  
անցնելուց հետո բոլոր տեսակի մատղաշ  
անասունները պետք է դրվեն ուցիոնալ

կերակրման մեջ՝ նրանց նորմալ աճը և զարգացումն ապահովելու համար:

21. Գոմերին կից ունենալ զբոսավայր (մանեթ) — լավ յեղանակներին մատղաշներին զբոսանքի հանելու համար:

22. Մատղաշները միշտ պետք է ապահովված լինեն մաքուր և չոր ցամքարով, վանդակները պահվեն մաքուր վիճակում:

23. Յուրաքանչյուր 10 որը մեկ անգամ մատղաշների վանդակները ախտահանել և սպիտակեցնել:

24. Մատղաշների (գառների, խոճկորների, մտրուկների և հորթերի) ճիճվաթափումը կատարել անասնաբուժի միջոցով:

#### 4. ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ ՅԵՎ ՄԵՏԻԶԱՑԻԱ

1. Ըստ գեներացիայի հաշվի առնել բոլոր տեսակի ցեղական արտադրողներին և կատարել զուգավորման յենթակա մայրական կազմի կցում այն հաշվով, վարպետի ապահովի պետական առաջադրանքի կատարումը (պլանը):

2. Բոլոր ֆերմաներում ունենալ զուգավորման համար հատուկ դազգահներ:

3. Զուգավորման կամպանիայի նախորդակին բոլոր տեսակի արտադրողներին ստուգել բրուցելյոզ և տուբերկուլյոզ հիվանդությունների նկատմամբ:

Բրուցելյոզով կամ տուբերկուլյոզով հիվանդ տեղական արտադրողներին հանձնել մսամթերման, իսկ ցեղականներին ոգտադործել միմիայն նույնանման հիվանդ անասունների համար:

4. Բոլոր տեսակի արտադրողներին սերմը պարտադիր կերպով ստուգել և ցածրորակ սերմ տվող արտադրողներին նրկատմամբ ուժեղացնել կերակրումն ու խնամքը:

Զուգավորման համար ոգտադործել միմիայն բարձրորակ սերմ տվող արտադրողներին: Ոգտադործման թույլատրված բոլոր ցեղական ցուլերի նկատմամբ պետք է լինեն համապատասխան ակտեր:

5. Յուրաքանչյուր արտադրողի համար սահմանել հետևյալ բեռնվածությունն ըստ ձեռնաքաղ՝ զուգավորման սխեմայի՝

ա) Յուլերին՝ 65—80 գլուխ

բ) Հովատակներին՝ 40—50 »

գ) Խոյերին՝ 25—40 »

դ) Վարազներին՝ 15—25 »

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յերիտասարդ արտադրողներին աշխատանքի առաջին տարին բեռնը վածությունը սահմանել մեծերի նորմայի 50<sup>0</sup>/<sub>0</sub>-ի չափով։

6. Կոլտնտեսության վարչությունը պարտավոր է կոլտնտեսականների անատական ոգտագործման տակ զտնվող անասուններին ապահովել արտադրողներով (ցուլերով, վարազներով, խոյերով և հովատակներով)։

7. Տոհմային արտադրողների բաշխումը և ոգտագործումը կատարել կոլտնտեսություններում համաձայն անասունների ցեղական շրջանացման, չթույլատրելով տարրեր ցեղերի արտադրողների ոգտա-



գործումը միևնույն կողմնադիրությամբ:

8. Չուգավորման համար սահմանել հետևյալ հասակը՝

ա) ծուլերին 2 տարեկանից.

բ) Յերինջներին՝ 20 ամսականից 2 տարեկան.

գ) Հովատակներին և զամբիկներին՝ 3 տարեկանից.

դ) Վարաղներին և եգ բուրվակներին՝ 9 ամսականից.

յե) խոյերին և շիշակներին՝ մեկ ու կես տարեկանից:

9. Բոլոր տեսակի արտադրողներին անհրաժեշտ է ապահովել խտացրած և լավորակ կոպիտ կերով, իսկ զուգավորման կառավարչության 1 $\frac{1}{2}$ —2 ամիս առաջ ուժեղացնել նրանց կերակրումը:

10. Սեռական հասություն ունեցող յերինջները և եգ հորթերը պետք է կցվեն կովերի նախրին, վորպեսզի ապահովվի նրանց ժամանակին զուգավորումը:

## 5. ԱՐԶԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Արհեստական սերմնավորման կայանները պետք է կառուցել վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններում, վորոնք կապահովեն կայանի բեռնվածությունը կովերի համար վոչ պակաս քան 200 գլխից, իսկ մանր յեղջերավոր անասունները՝ 1500 գլխից: Կայաններում պետք է սերմնավորվեն թե կոլտնտեսության և թե կոլտնտեսականների ու մենատնտեսների անասունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բրուցելյոզով և տուբերկուլյոզով վարակված անտեսություններում թուլատրվում է բանալ սերմնավորման կայան այն պայմանով, վոր հիշյալ հիվանդություններով հիվանդ անասունները սերմնավորվեն յենթակայաններում առողջ արտադրողների սերմով: Վերջինս պետք է ձեվակերպվի համապատասխան տկտով, շրջանային անասնաբուժի անմիջական մասնակցությամբ:

2. Կովերի արհեստական սերմնավորման կայաններում պետք է աշխատեն 3-րդ գիներացիայից վոչ պակաս արտադրողներ,

վորոնք անպայման պետք է գրանցված լինեն պետական տոհմային գրքերում:

Վոչխարների սերմնավորումը պետք է կատարել զտարյուն խոյերով:

## 6. ԱՐՈՏԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍ-ՏՈՒՄԸ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. Անասուկանների խմբավորումը և բրիգադների կազմելը՝ արոտային շրջանին անցնելիս թողնվում է հոտերի կոմպլեկտավորման նույն սկզբունքը, ինչպես կազմված է յեղել մսուրային շրջանում:

2. Զոոտեխնիկի և անասնաբուժի անմիջական մասնակցությամբ կոլտնտվարչությունը նախքան անասուկանների արոտային շրջանին անցնելը, կատարում է արոտների բաշխում ըստ անասուկանների տեսակների և բրիգադանների:

3. Յուրաքանչյուր բրիգադին հաստատված արոտավայրն ռացիոնալ ոգտադորման համար իր հերթին բաժանվում է մասերի—հերթականորեն արածացնելու նըպատակով, այն հաշվով, վոր յուրաքանչյուր

արոտամասում տվյալ բրիգադի անասուն-  
ները մնան 10 սրից վոչ ավելի:

4. Կատեգորիկ կերպով արգելել անա-  
սունների վաղ գարնան արածացնելը,  
թույլատրելով այնպիսին միմիայն այն  
դեպքում, յերբ արոտավայրերում խոտի  
բարձրությունը լինի վոչ պակաս քան 10  
սանտիմետր:

5. Արգելել անասունների առավոտյան  
վաղ արածացնելը, մինչև ցողի վերանալը:

6. Շոգ յեղանակներին (կեսորվա պա-  
հին) անասուններին տալ հանգիստ, ուժե-  
ղացնելով գիշերվա արածացնելը:

7. Կանոնավորել ջրելատեղերը և կար-  
գի բերել ջրելատեղ տանող ճանապարհնե-  
րը, վոչ հոսուն ջրով անասուններին ջրելը  
և անասունների ջրելատեղին մոտ լվածք  
անելն արգելվում է:

8. Նախքան անասունների արոտային  
շրջանին անցնելը, բոլոր արոտները յին-  
թարկվում են ստուգման, մաքրվում են  
դիակներից, թափթփված վոսկրներից և  
կեղտից:



կատարվում է ջրելատեղերի մաքրում  
և սահմանվում է հատուկ հսկողություն  
արոտավայրերի և ջրելատեղերի վրա:

9. Վարակիչ անասունների համար ա-  
ռանձնացնել հատուկ արոտամաս՝ առան-  
ձին ջրելատեղերով, այն հաշվով, վորպես-  
զի հիվանդ անասունները չանցնեն առողջ  
անասունների արոտամասով և նրանց հետ  
շփում չունենան:

10. Արոտային շրջանին անցնելուց մոտ  
մեկ ամիս առաջ պետք է հովիվներին ծա-  
նոթացնել անասունների արոտային շրջա-  
նի հիվանդությունների, առաջին ոգնու-  
թյան, փասաակար և թունավոր խոտերի,  
արոտների ոգտագործման տեխնիկայի և  
այլի հետ:

11. Անասուններին նախքան արոտ  
թողնելն անհրաժեշտ է՝

ա) Վողջ անասուններին յենթարկել  
զոո-անասնաբուժական քննության.

բ) Բոլոր հիվանդ և կասկածելի անա-  
սուններին առանձնացնել մեկուսարաննի-

բում կամ հատուկ առանձնացված արտամասերում.

գ) կտրտիլ և մաքրել ձմեռվա ընթացքում աճած սմբակները, կճղակները և սուր յեղջյուրները.

դ) Մշակել բոլոր խոշոր յեղջերավոր անասուններին մաշկային բուխց, անասնաբուժական պերսոնալի ցուցմունքներով:

12. Առանց անասնաբուժի վկայականի վոչ մի անասուն չի թույլատրվում արտատանելու:

13. Չի թույլատրվում անասունների արածացները բանուկ ճանապարհների և անասնագերեզմանոցների մոտ, ինչպես և անասնաբուժական հսկողության կողմից անապահով հայտարարված վայրում:

14. Քոչվորական և անասունների տեղաշարժման շրջանում, նախքան անասուններին նոր արտոտավայր տեղափոխելը, կատարվում է անասունների անասնաբուժական ստուգում և մշակում:

15. Բրիգադիրները կամ ավագ հովիվներն իրենց ճանապարհին ընկած ընակա-



վայրի անասնաբուժական ու սանիտարա-  
կան տեսակետից ապահով լինելու մասին  
գյուղխորհուրդներից պարտավոր են վերց-  
նել տեղեկանքներ:

16. Կենդանիներին ճիճվային հիվան-  
դություններից զերծ պահելու համար ճահ-  
ճային արոտներն անհրաժեշտ է չորացնել՝  
առուներ փորելու միջոցով:

17. Վոչխարների թռքային ճիճուներով  
վարակված շրջանում անհրաժեշտ է սահ-  
մանել արոտների արածացման խիստ հեր-  
թականություն: Յուրաքանչյուր արոտա-  
մասում վոչխարներին պետք է արածաց-  
նել 5—6 որից վոչ ավել, իսկ նրանց նույն  
արոտամասում կարելի չէ արածացնել 3  
ամսից վոչ շուտ:

Նույն արոտամասում այլ տեսակի ա-  
նասունների արածացնելը թույլատրե-  
լիք չէ:

18. Գարնանային և ամառային շրջա-  
նում կենդանիների տիգերը և բոռի թի-  
թեռները հավաքել և վոչնչացնել: Ամառը  
ցերեկվա կթի ժամանակ սխտեմատիկա-

բար ստուգման յենթարկել վոչխարներին,  
նրանցից վերաժողուններին (վորդ առաջա-  
ցածներին) ջոկելու և բուժելու համար:

## 7. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Անասուններին ոգտագործողից ըն-  
դունելիս անասնապահը պարտավոր է ման-  
րամասն զննել կենդանուն և վորեմի տը-  
րորվածք, հարված կամ այլ հիվանդու-  
թյուններ ու պակասություններ նկատելու  
դեպքում անմիջապես ղեկուցել այդ առ-  
թիվ բրիգադիւրներին՝ համապատասխան  
բուժման միջոցներ ձեռք առնելու համար:  
Բրիգադայում անցկացնել քաշող ուժի ան-  
հատական կցում:

2. Աշխատող անասուններին պետք է  
տալ շաբաթվա մեջ մեկ օր հանգիստ,  
հիմնական դյուղատնտեսական աշխատանք-  
ներն սկսելուց առաջ տալ տեվողական  
հանգիստ 10—15 օր: Թույլ և հյուժված  
կենդանիներին տալ հանգիստ մինչև կազ-  
դուրվելը:

3. Ամբողջ ղուգավորման կամպանիայի

նախապատրաստման և նրա անցկացման  
ընթացքում արգելվում և ոգտագործելն  
աշխատանքի մեջ արտադրող հովատակնե-  
րին (վորոնք առանձնացված են զուգա-  
վորման համար):

4. Զիապահների և անասնապահների  
աշխատանքը գնահատվում և քաշող ուժի  
առողջության ստուգման արդյունքներով:

### 8. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԶՈՈՀԱՇՎԱՐԿ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքի ճիշտ կազմակերպման  
և զոոտեխնիկական հաշվառումը լավ հիմ-  
քերի վրա դնելու համար բոլոր կոլտնտե-  
սային անասնապահական ֆերմաներում  
պարտադիր կերպով ունենալ հետևյալ  
հաշվառման ձևերը՝

ա) Զուգավորման մատյան.

բ) Ամենօրյա կաթի գրանցումների  
մատյան.

գ) Մատղաշների աճեցման մատյան.

դ) Մայրերի գիրք.

յե) Կովերի արտադրողական քարտեր:

2. Գրանցումներ ըստուգումը և ցուցա-  
մունքներ տալը կատարվում և զոտախոս-  
նալի կողմից:

3. Խոշոր ֆերմաներում, վորտեղ ֆեր-  
մայի վարիչը հնարավորությունն չունի կա-  
տարելու գրանցումները, կոլտնտեսության  
վարչության կողմից նշանակվում և հա-  
տուկ հաշվեառ:

4. Յուրաքանչյուր ծին, անկում, խո-  
տանում և վաճառում պետք է ձևակերպվի  
համապատասխան տկոտվ, ստորագրվի կոլ-  
խոզի նախագահի, ֆերմայի վարիչի, զոտ-  
տեխնիկի և անասնաբուժի կողմից:

## 9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵՅՈՂՆԵՐԻ ԿԻՐՍՈՒՄԸ

1. Աշխատանքների կազմակերպումը  
կոլտնտեսային տալրանքային ֆերմանե-  
րում անցկացնել համաձայն գոյություն  
ունեցող աշխատանքի կազմակերպման հը-  
րահանգի:

2. Լայն ծավալել սոցմրցումը, հարվա-



ծայնութիւնը և ստախանովական մեթոդների կիրառումն արտադրութեան մեջ, և առաջավորների փորձը դարձնել կոլտնտեսային ֆերմաների անասնապահների սեփականութիւնը:

3. Անասնապահութեան բնագավառում աշխատողներին վորակավորելու և նրանց տեխնիկական մակարդակը բարձրացնելու համար կազմակերպել զոոխմբակներ՝ արտադրութեան մեջ կիրառել զոոտնասնաբուժական միջոցառումները: Ստուգել աշխուրի ճիշտ հաշվառումը և նրանց ժամանակին դրանցումները աշխուրքույկներում:

## 10. ԶՈՈ-ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿՈՆՏՐՈԼԸ ՅԵՊ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն կանոնների կիրառումը խորհտընտեսութիւններում դրվում է՝ խորհտընտեսութեան դիրեկտորի վրա, կաթնապրանքային ֆերմաներում՝ կոլխոզ-նախագահների, ֆերմայի վարիչների և անաս-

նապահական բրիգադիւնների վրա, իսկ ինչ  
վերաբերում է անհատական ոգտագործ-  
ման տակ յեղած անասուններին — կանոն-  
ների կիրառման պատասխանատվությունն  
ընկնում է անասնատերերի, կոլտնտեսու-  
թյան նախագահների և գյուղխորհրդի նա-  
խագահների վրա:

2. Սույն կանոնների կիրառման ղեկա-  
վարությունը և հսկողությունը դրվում է  
շրջ Հողբաժնի անասնաբուժական և զոո-  
տեխնիկական անձնակազմի ու շրջանային  
թերթի վրա:

3. Յուրաքանչյուր անասնապահական  
խորհտնտեսություն, կոլտնտեսություն և  
գյուղխորհուրդ պետք է ունենա զոոպեր-  
սոնալի այցելության գիրք, վորտեղ պետք  
է գրանցվի դիտողություններ անասնապա-  
հության դրության մասին, անասնաբու-  
ժական կանոնների կիրառման և անհրա-  
ժեշտ միջոցառումների և վերջիններիս կա-  
տարման մասին նշումներ:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037263



(504)

246

A  $\frac{1}{2524}$

Սույն կանոնները չկաս-  
ում մեղավորները յենթարկվում են  
վարչական տուժի՝ տուգանքի մինչեւ  
100 ռ. կամ այլ դեպքերում վորպես  
որենք խախտողների՝ կանչվում են  
քրեական պատասխանատվության:

ԿԱԶՄԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՇԱՀԲԱՋՅԱՆ

8738

